համայն կենդանեաց և ննջեցելոց հոգւոյն, 1869»։ (Ցուց. պ.)։

ԿԻՐԵՂ ԵՊՍ. ՍՐԱՊԵԱՆ, ԿԷՑՎԷՑԻ. — Մբ. Ծ. 1844ին, աշկ. Ժառ. վարժ. ի, Զռ. 1868ին, կը վարէ վանական և ուսուցչական պաշտօններ. կը մեկնի Ս. Յակոբի վանքէն 1872ին։ Քննիչ ի Սեբաստիա 1873ին, կը միաբանակցի Ս. Էջմիածնի և կը կարգուի դասատու Գէորգեան ճեմարանին 1875ին. պաշտօնով կ'երթայ Կարս 1879ին. վանահայր Նոր Նախիջևանի Ս. Խաչ վանքին 1884ին, Փոխանորդ Երևանի 1892ին. կը ձեռնադրուի եպս. 1894ին, կը վախճանի 1895ին և կը թաղուի Նոր Նախիջևանի Ս. Խաչ վանքը։ Խրիմեան Հայրիկի շարադրութեամբ տե՛ս իր տապանագիրը (Լումայ, 1901, էջ 142)։ Առարատի մէջ հրատարակած իր յօդուածներէն զատ՝ յօրինած է նաև հայերէն լեզուի Քերականութիւն մը. (Տպ. Երուսաղէմ, 1872)։

ԿԻՐԵՂ ՎՐԴ. ԵՐԶՆԿԱՑԵՑԻ.—Մբ. կը յիշատակուի Գրիգոր վրդ. Պասմաճեան պտրք.ի յիշատակարանին մէջ (էջ 28), «Գրիգոր մեծ վարդապետն եւ պատրիարքն սրբոյն Սաղիմայ, որ էր մի յաշակերտաց տեառն Վարդանայ Ամրտօլեցւոյ. որոյ վարքն եւ համբաւն սրբութեան եւ վարուցն նորին սփռեալ եւ տարածեալ ընդ ոլորտս տիեզերաց, որ իբրև արեգակն փայլէր ի մէջ ազգին իւրոյ. ոմն ի միաբանից իւրոց, Երզնկայեցի Կիւրեղ անուն, արհամարհեաց զնա եւ զբազումս անգոսնեաց ոչ խնայելով զծերութիւն նորին և ո՛չ պատկառելով ի նորին մեծ համբաւէն այնպիսի երջանիկ և սրբակրօն անձինն. այլ ստիպեալ ի յիւրոյ դիւական ախտակրութենէն և ամբարտաւանութենէն, խօսեցաւ զբանս յերես նորին զոր ինչ կամեցաւ, և խոցոտեալ զսիրտ և զհոգի այնպիսի հոգիացեալ առն երջանկի և սրբազանի»։

ԿԻՐԵՂ ՎՐԴ. ԵՐԵՒԱՆՑԻ.—Մբ. կը միաբանակցէր 1717ին։

ԿԻՐԵՂ ՎՐԴ. ՅԱԿՈԲԵԱՆ, ԶԷՅԹՈՒՆՑԻ.—Մբ. աւազանի անունը Ստեփան. Զռ. 1857ին. կը վախճանի 1858ին, իր տապանագիրը կը դնենք հոս. «Այս է տապան հանգստեան Սրբոյ Աթոռոյս միաբան Կիւրեղ Վրդ. Զէյթունցի միամեայ աբեղայ վախճանեալ 1858 Հոկտ. 16ին.» տապանաքարը չինել կուտայ հանգուցեալին հայրենակիցը Աթանաս վրդ. Թաշճի Առաստուրեան։

ԿԻՐԵՂ ՎՐԴ. ԻՍՐԱՑԵԼԵԱՆ, ԶՈՒՂԱՑԵՑԻ.— Մբ. Հայրը՝